



Սյունյաց Երկիր

ՀԱՐԱԹ, 18 ԱՊՐԻԼԻ 2015Թ.
№ 11 (354)

www.syuniacyerkir.am



**Վազգեն Սարգսյանին.
անխաթար արիությունը
ճանաչակներ հետք քեր,
անշուշտ, թույլ է թալու
ժամանակի բարձունքից
դիտել հերոսացունի ու
անկման մեր այս օրեր
եւ համայնադասկերի
բերել շնեոնող, հառնող
ժողովրդի ջանք, քանզի
կարող գրիչներից,
աղբյուր հոգիներից
ոչ ոք ունեցավ քո
խիզախությունը՝ ճեսնել
ու իմանալ այնքան շատ,
որքան դու, սիրելի գրող,
ընկեր զենեալ, դարուն
նախարար:
ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի այցը

Մարտի 31-ին եւ ապրիլի 1-ին ՀՀ տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանն աշխատանքային այցով Սյունիքի մարզում էր: Նա Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի ուղեկցությամբ այցելել է համայնքների խոշորացման պիլոտային ծրագրի մաս կազմող վեց գյուղական համայնք՝ Տաթև, Հալիծոր, Տանձատափ, Հալիծոր, Սվարանց, Հարժիս: Հանդիպելով տեղի բնակչության հետ՝ նախարարը նրանց ներկայացրել է խոշորացման ծրագրի նպատակը եւ հավաստիացրել, որ գյուղացիները փաստաթղթային հարցեր լուծելու խնդիրներ չեն ունենալու: Նաեւ պատասխանել է գյուղացիներից հուզող հարցերին ու վստահեցրել, որ ծրագիրը միտված է համայնքների զարգացմանը:

Վերադարձ

«XXI դարը մերն է լինելու». այս հաստատ համոզմունքն ուներ Վազգեն Սարգսյանը: Ավաղ, նախասահմանված չէր նրա ապրելու եւ իր ծրագրերն իրականացնելու երրորդ հազարամյակում: 1999 թվականի հոկտեմբերի

27-ին Ազգային ժողովի դահլիճում պետական ու քաղաքական գործիչը զոհ գնաց ոճրագործի դավադիր զնդակին՝ անավարտ թողնելով բազում մտահղացումներ, որոնց հիմքում ընկած էին հզոր երկրի կառուցման տեսլականը: Ապրիլի 2-ին մարզկենտրոն Կապանի

Բաղաբուրջի հուշահամալիրում տեղի ունեցավ Վազգեն Սարգսյանի կիսանդրու բացման արարողություն, որին մասնակցում էին Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, քաղաքային եւ գյուղական համայնքների ղեկավարներ, հյուրեր մարզի տարբեր ոստաններից, հին ու նոր երկրապահներ: Հուշարձանը երիզող սպիտակ սավանն իջեցնելու պատիվը վերապահվեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին, Վազ-

էջ 2

Բելառուսի դեսպանը Սյունիքում

Ապրիլի 6-ին Բելառուսի արտակարգ եւ լիազոր դեսպան Ստեպան Սուխորենկոն գերմանական ֆաշիստներից Բելառուսի ազատագրման 70-ամյակի կապակցությամբ Հայրենական մեծ պատերազմի վետերաններին մեղալներ հանձնելու նպատակով Սյունիքում էր: Մարզպետարանում Սուրեն Խաչատրյանի հետ միասին նա մեղալներ հանձնեց Բելառուսի ազատագրմանը մասնակցած 17 վետերանի, որոնցից անձամբ ներկա էր չորս հոգի:

Դեսպանն իր խոսքում նշեց, որ Բելառուսի Հանրապետության նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հրամանագրով հարթանակի 70-ամյակի կապակցությամբ մեղալներ են շնորհվում Սյունիքի մարզից մասնակիցներին եւս: Նրա հավաստմամբ՝ եւ վետերանները,

եւ պատերազմում զոհվածների ընտանիքները մշտապես իրենց պետության ուշադրության կենտրոնում են: «Հնայած Բելառուսը բավականին հեռու է Հայաստանից, բայց հայ ժողովուրդն իր դերակատարումն է ունեցել այն ֆաշիստներից ազատագրելու գործում: Մենք մշտապես հիշում ենք նրանց սխրագործությունը եւ ունեցած ներդրումը ԽՍՀՄ հաղթանակի գործում», – նշեց դեսպանը:

Նախագահ Լուկաշենկոյի ուղարկած մեղալներից, վկայագրերից եւ պատերազմական տարիներից հայտնի շնորհակալական եռանկյունաձև նամակներից բացի՝ Սուրեն Խաչատրյանը դրամական պարգև է հանձնեց վետերաններին:

Սյունիքի մարզպետը, շնորհավորելով վետերաններին, նրանց մաղթեց քաջառողջություն:

Վետերանները շնորհակալություն հայտնեցին Բելառուսի նախագահին եւ դեսպանին՝ իրենց պատվելու եւ մշտապես ուշադրության արժանացնելու համար:

Կապանի վետերանական կազմակերպության նախագահ Ռաֆիկ Հարությունյանը դեսպանին խնդրեց ճշգրտել Բելառուսում պատերազմի ընթացքում զոհված կապանցիների ցուցակը: Վերջինիս հարցմանն ի պատասխան՝ տեղեկացրին, որ այդ ցուցակները նա-



խապատրաստման փուլում են: Դեսպան Սուխորենկոն, եզրափակելով միջոցառումը, ցանկություն հայտնեց, որ Հայաստանի Հանրապետությունում մշտապես լինի խաղաղություն, իսկ վետերաններն ապրեն ողջ եւ առողջ:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

էջ 2



Վերադարձ

րոտության ու անկոտրուն կամքի շնորհիվ սպարապետ Վազգենի առաջնորդությամբ մենք ազատագրեցինք մեր պատմական հայրենիքի Արցախ աշխարհը, Վազգենը հպարտորեն գոչեց. «Ամենակատարյալ ստեղծագործությունն ազատագրված հողն է», – ուրիշ էլ ի՞նչ ասեր, որ արժանապատվորեն ապրած տարիները եւ ասելիքը մնար որպես կարգախոս մի ողջ ժողովրդի համար», – բացման խոսքում ասաց

եղ 1 Վազգեն Սարգսյանի կրտսեր եղբորը՝ ԶՂ պաշտպանության նախարարի խորհրդական Արմեն Սարգսյանին: Այնուհետև հոգեհանգստյան արարողություն անց-

կացրեց Կապանի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ Վահան քահանա Զեբոյանը: «Չայ ժողովրդի զրկանքների ու տառապանքների, հե-

Սյունիքի մարզպետ, ԵԿՄ-ի Սյունիքի մասնաճյուղի նախագահ Սուրեն Խաչատրյանը: Վազգեն Սարգսյան անհատականության, բանակաշինության գործում ունեցած ավանդի, նրա հայրենամուտ գործերի մասին իրենց ելույթներում մանրամասնեցին Երեւանի պետհամալսարանի պրոֆեսոր Արարատ Մախաչյանը, ԶԶԿ Կապանի շրջանային խորհրդի նախագահ Ռոմա Սարգսյանը, երկրապահ կամավորների միության Կապանի բաժանմունքի նախագահ Մանվել Օհանյանը, Կապանի զինկոմ, փոխգնդապետ Լեոնիդ Գրիգորյանը: «Մարդիկ կատարեցին այս

հրաշք գործը, հատկապես Սյունիքում, որտեղ Վազգենը մեծ լուսն ունի զինվորական ու պետական կառույցների կայացման գործում: Ինձ համար մեծ հպարտություն է գտնվել այստեղ եւ շնորհակալություն հայտնել Սյունիքի ամբողջ ժողովրդին», – արարողությունից հետո ասաց Արմեն Սարգսյանը: Վազգենի հերոս Վազգեն Սարգսյանի կիսանդրին կերտել է երիտասարդ քանդակագործ Նարեկ Օրդյանը՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանի նախածնունդայամբ ու հովանավորությամբ: ՎԱԶՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի այցը

եղ 1 Այցի ընթացքում մասնակցեց նաեւ մարզ-խորհրդի նիստին, որտեղ նախարարի երկօրյա այցի ամփոփումից բացի՝ մարզպետարանի բաժնիների ղեկավարները ներկայացրին նախորդ տարում կատարված աշխատանքները:



2015թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքներում սեփական եկամուտների հավաքման ընթացքի մասին ներկայացրեց ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Սուսաննա Դավթյանը: Մարզի համայնքների 2015թ. բյուջեներով նախատեսվել են 4.209.347.9 հազար դրամ եկամուտներ, այդ թվում՝ սեփական եկամուտներ՝ 1.371.587.3 հազար դրամ: Եռամսյա ժամանակահատվածում նախատեսված 303.426.1 հազար դրամի դիմաց սեփական եկամուտների փաստացի հավաքումը կազմել է 332.847.7 հազար դրամ կամ նախատեսվածի 109.7%-ը: 2014թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ավելի է հավաքվել 74.938.4 հազար դրամ, սեփական եկամուտների աճը կազմել է 29.1%: Ս.Դավթյանը նշեց, որ որոշ համայնքներ թերացել են եկամուտների հավաքման գործում: Մարզի համայնքներում ԶՂ օրենսդրության մի շարք պահանջների կատարման մասին ներկայացրեց իրավաբանական բաժնի պետ Կառլեն Կոզմանովը: Նա նշեց, որ ՏԻՄ-երի իրականացրած աշխատանքներում դեռեւս առկա են օրենսդրական ակտերի պահանջների խախտումներ եւ բացթողումներ, որոնց վերաբերյալ համայնքների ղեկավարներին ուղարկվել են

համապատասխան պաշտոնական գրություններ: Բաժնի պետը հատկապես շեշտը դրեց համայնքապետների՝ քաղաքաշինական գործունեության բնագավառում հաճախակի թույլ տրվող խախտումների, թերացումների ու բացթողումների վրա: ԶՂ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի եւ հողային պետական տեսչության իրականացրած տեսչական ստուգումների արդյունքների եւ արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների մասին ներկայացրեց հողաշինության եւ հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության պետ Մուշեղ

Կոտանդյանը: Նա առանձին խախտումների չանդարձարժավ, պարզապես ներկայացրեց արձանագրված այն խախտումները, որոնք կարելի է հանդիպել բոլոր համայնքներում, մասնավորապես առանց հողամասերի գործառնական նշանակության եւ կամ հողատեսքի փոփոխության հողամասի հատկացումը, առանց համապատասխան վարձակալության պայմանագրերի կնքման հողամասի հատկացում, հատկապես գյուղատնտեսական նշանակության, առանց հիմնավորման մեկ հողաբաժնից պակաս չափով գյուղատնտեսական նշանակության հողամասերի մասնատման դեպքերը, հողի հարկի դրույքաչափից պակաս հողամասերի վարձակալության վճարների

սահմանումը եւ այլն: Մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2014թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման եւ 2015թ. խնդիրների մասին խոսեց զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժնի պետ Էդգար Մարտիրոսյանը: Ներկայացնելով մարզում կատարված առավել խոշոր ներդրումային ծրագրերը՝ նա նշեց, որ մարզի տնտեսության զարգացման նպատակով միջազգային եւ դոնոր կազմակերպությունների 2014թ. մարզում ներդրումների չափը կազմել է 22.14մլրդ դրամ: Բաժնի պետն առանձնացրեց նաեւ այն աշխատանքները, որոնք կատարման փուլում են: 2015թ. աշխատանքների ֆինանսավորումը կազմել է 31.5մլրդ դրամ, որից 6.58մլրդ՝ պետբյուջեից, 9.17մլրդ՝ միջազգային կազմակերպություններից, 124մլն՝ համայնքային բյուջեներից, 15.64մլրդ՝ մասնավոր ներդրողներից:

Կապանի քաղաքապետ Աշոտ Զայրապետյանը նշեց, որ համայնքում 2013-14թթ. ընթացքում կյանքի են կոչվել բազում ծրագրեր, բայց դեռ լուծում պահանջող մի շարք հարցեր կան: Մասնավորապես՝ քաղաքի ծայրամասային որոշ թաղամասեր (նախկին բանավաններ) գազիֆիկացված չեն, մայթերի եւ փողոցների բարեկարգումն ամբողջապես չի իրականացվել, մանկապարտեզների վերանորոգման եւ նորը կառուցելու անհրաժեշտություն կա եւ այլն: Վերջապես համայնքի համար կարելի է մասն օդանավակայանի վերագործարկումը, որի ծրագիրը ներկայացվել է կառավարություն: Մեղրու քաղաքապետ Արշավիր Դովհաննիսյանը տեղեկացրեց, որ համայնքում լուծվել են մի շարք հարցեր, բայց բազմաբնակարան շենքի կառուցման անհրաժեշտություն կա, որի կարիքն ունեն հատկապես երիտասարդ ընտանիքները: Քաղաքապետարանը ծրագիր է ներկայացրել կառավարություն, ըստ որի՝ նախկին հիվանդանոցի շենքը կարելի է վերակառուցել եւ դարձնել բնակելի շենք: Քարահունցի գյուղապետի հավաստմամբ՝ համայնքում հրատապ լուծում պահանջող խնդիրները գրեթե լուծվել են, միայն գյուղտեխնիկայի թարմացման եւ սողանքային գոտում գտնվող գյուղացիների տների հարցը լուծման կարող է: Նախարար Ա.Երիցյանը, ամփոփելով երկօրյա այցը, նշեց, որ այս պահին մարզում համայնքների խոշորացման ծրագրի ամենաառաջնայինն է: «Այցելելով մի շարք համայնքներ՝ բնակիչների հետ բացատրական աշխատանքներ ենք կատարել խոշորացման հետ կապված: Համայնքների խոշորացմամբ կիրականացվեն մի շարք աշխատանքներ, վերահսկելի կդառնան եւ միջազգային կազմակերպություններից, եւ պետբյուջեից տրամադրվող գումարները: Բացի դրանից՝ միջազգային կազմակերպությունների համար ավելի հեշտ է ներդրում կատարել խոշորացված համայնքներում, որտեղ կատարված աշխատանքներն ակնհայտ կլինեն: Խոշորացման ծանապարհի դժվարությունները պետք է միասնաբար հաղթահարենք: Համայնքների զարգացման համար յուրաքանչյուր համայնքապետ պիտի ներկայացնի հստակ ծրագիր»: Մարզպետ Սուրեն Խաչատրյանը համայնքապետներին հորդորեց հատկապես սեփական եկամուտների հավաքման գործում առավել պարտաճանաչ լինել եւ ձգտել այդ աշխատանքները կատարել 100 տոկոսով: Մարզպետը նշեց, որ առավել ուշադրության կենտրոնում են դարձրելի հիմնանորոգման, մարդկանց աշխատանքով ապահովելու, համայնքային հողերի ջրարբիացման ծրագրերը: ԱՐՄՆԵ ԶԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

Պետական սահման

Հաղթանակի էսքաֆեդը՝ Մեղրու սահմանապահ ջոկատում

ԱՊՅ երկրների սահմանապահ զորքերի հրամանատարության խորհրդով ԱՊՅ երկրների արտաքին սահմանների երկայնքով անցկացվում է միջազգային էստաֆետ նվիրված Մեծ հաղթանակի 70-ամյակին: Էստաֆետը մեկնարկել է փետրվարի 2-ին հերոս քաղաք Բրեստի ամրոցից: Ապրիլի 2-ին էստաֆետի խորհրդանիշները դիմավորեցին մեր հանրապետությունում, իսկ ապրիլի 6-ին էստաֆետը հասավ Մեղրու սահմանապահ ջոկատ:

Օրվա խորհրդին նվիրված միտինգ տեղի ունեցավ ջոկատի շարային հրապարակում: Ներկաներին շնորհավորելով նշանավոր օրվա առթիվ՝ սահմանապահ ջոկատի նորանշանակ հրամանատար, գնդապետ Անդրեյ Վենիամինովիչ Կորչանովն իր խոսքում մասնավորապես նշեց, որ սահմանապահ ուղեկալներն առաջինը կրծքով դեմ կանգնե-

– ասաց հրամանատարը, – մենք գիտենք այդ հաղթանակի արժեքն ու նշանակությունը, հիշում ենք, թե հատկապես խորհրդային Միությունն ինչպիսի ջախջախիչ հարված հասցրեց գերմանական նացիզմին՝ նրան վերածելով մոխրի, այդպիսով կանխորոշելով երկրորդ համաշխարհային պատերազմի ելքը»:

Օրվան պատշաճ ուղեկալներ ունեցան 33 սահմանապահ զորքերի վետերանական կազմակերպության նախագահ, պաշտոնաթող գնդապետ Գրիգորի Յավրուսովը, սահմանապահ զորքերի վետերան Սերգեյ Ջարոթյունյանը: Վետերաններն իրենց խոսքում արժեուրեցին հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ աշխարհամարտում, նաև սահմանապահ զորքերի ավանդը մեծ հաղթանակի կերտման գործում: Ելույթներում հնչեցին նաև պատմական փաստեր. Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտեր մեկնեցին հայ ժողովրդի մոտ 600



Սահմանապահ ջոկատի հրամանատար Անդրեյ Կորչանովը

II «Մենք հիշելու եւ հպարտանալու շատ բան ունենք, նաեւ գլուխ ենք խոնարհում Մեծ հայրենականում ընկածների հիշատակի առջեւ»

ցին ֆաշիստական հորդանների դեմ հանդիման՝ իրենց վրա վերցնելով հուժկու հարվածները եւ Մեծ հայրենականի ռազմադաշտերում իրենց անունը պսակեցին անմար փառքով: «Ժողովուրդը չի մոռանում այդպիսի սրբազան տարեթվերը,

հազար ուստրեր եւ դուստրեր, որոնցից մոտ կեսը չվայելեց մեծ հաղթանակի բերկրանքը: Հայ ժողովրդի զավակներից 103-ն արժանացավ խորհրդային Միության հերոսի կոչման, 27-ը՝ Փառքի երեք աստիճանի շքանշանների: «Մենք հիշելու եւ

հպարտանալու շատ բան ունենք, նաեւ գլուխ ենք խոնարհում Մեծ հայրենականում ընկածների հիշատակի առջեւ», – ասացին վետերանները: Էստաֆետի մուտքը Մեղրի ող-

ջունեցին եւ սահմանապահ վետերաններին բարեմաղթանքի խոսքեր հղեցին Մեղրու սահմանապահ ջոկատի դպրոցի աշակերտներ Էդուարդ Գեւորգյանը եւ Վիկտորյա Կոնտարենկոն: Հանրահավաքից հե-

տո ծաղկեպսակ դրվեց հաղթանակի հուշարձանի պատվանդանին, իսկ միջոցառումն ավարտվեց գորամասի սպաների եւ մարտիկների համդիսավոր երթով:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Դպրոցականներ՝ Էդուարդ Գեւորգյանը եւ Վիկտորյա Կոնտարենկոն



Վետերանները ծաղիկներ են դնում Հաղթանակի հուշարձանին

Անդրանիկն Անգեղակոթում



Ա՛խ ֆիդայիներ, ջա՛ն ֆիդայիներ, Ձեր մայրերը՝ Ձե՛զ մաքաղ...

Անդրանիկ Օզանյանի զինվորական կյանքի ուշագրավ էջերից են այն ինը ամիսները, որ անցկացրել է Սյունյաց աշխարհում՝ նախ կենտրոն ունենալով Գորիս քաղաքը, ապա՝ Անգեղակոթ գյուղը: Երբ թուրքական զորքերը գրավում են Նախիջևանն ու Ջուլֆան, տեղի հայերը ստիպված գաղթում են Ձանգեզուր: Անդրանիկն մնում էր մի ճանապարհ՝ ամրանալ Ձանգեզուրում եւ այն դարձնել անառիկ մի ամրոց: Օգոստոսի 3-ին զորահրամանատարը մտնում է Գորիս: Դիտելով Գորիսի բնական ամրությունները՝ Անդրանիկն ասել է. «Իրավ որ Սյունիքը հետ չի մնա Ձեյրունեն եւ Սասունեն»: «Ձորքի համար նա հրամանատար էր, գաղթականության համար՝ հայր», - գրել է Ժամանակակիցներից մեկը: Պահապան հրեշտակի նման հսկեց ամբողջ Ձանգեզուրի վրա մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ կարող էին շատ ու շատ ծանր անակնկալներ պատահել, եթե հեղինակավոր ու ռազմական գործի մեջ թրծված հերոսն օգնության չհասներ:



Արամ Աթանեսյան

ցել, որոնց հիշողության ծալքերում մնացել են անդրանիկյան պատմություններ: Աթանեսյանների այժմյան օջախում է իջեւանել Անդրանիկը, նրա մասին հուշեր է ներկայացնում Արամ Աթանեսյանը, ով Մեծ հայրենականի միակ կենդանի մասնակիցն է Անգեղակոթում: Պատմում է, որ Անդրանիկն Անգեղակոթ էր եկել իր զորականների հետ, գյուղի տների վրա բաշխվել էին նրանք, իսկ ինքը մի քանի հոգով բնակվում էր Աթանեսյանների ներկայիս տանը: Այն սենյակը, որտեղ զորավարն էր գիշերում, պահպանվել է իր նախատեղծ տեսքով, օժորքի գերանները պահպանվել են, նույնն են նաեւ դուռն ու բռնակը, որոնց դիպել են զորավարի մատները: Նույնիսկ եղել է մեկը, որը, որպես մասունք, ցանկացել է զնել դռան բռնակը, բայց Աթանեսյանները մերժել են: «Անդրանիկի տանը ձեռք չենք տվել, ինչ որ կար, թողել ենք», - ասում են տնեցիները: Անդրանիկի մասին հուշերը համով-հոտով էր պատմում օջախի տիրուհին՝ Ասյա Գովետիյանը, ում մտերիմներն «Անդրանիկի թռռնիկ էին անվանում»: Բայց նա մեկ տարի է, ինչ հրաժեշտ է տվել երկրային կյանքին: Եվ այժմ հուշեր է ներկայացնում նրա ամուսինը: Արամ պապի հիշողության մեջ հատկապես մնացել է այս դեպքը:

«Անդրանիկը, որ եկել է Անգեղակոթ, վեց ամիս մնացել է ստեղ:



Անգեղակոթի այն տունը, որտեղ ապրում էր Անդրանիկը



Անգեղակոթ

Մեկին ասել է՝ ծիղ պեր, զենք ենք տեղափոխում: Եղ էլ էքոմ ա, ձին նալում ա, մեխը խփում ա ոտքի մեջ, հետո ձին պերում ա՝ թե կաղում ա: Անդրանիկն էլ, թե՛ ծիղ քաշի էն կողմը: Զրացանը հանում, խփում ա, դե գնա, ասում ա»: Զրամանատարին խաբելը թանկ է նստում գյուղացու վրա:

Անդրանիկն ազատ ժամերին օգնել է գյուղացիների՝ զանազան շխատանքներում: «Մեկը խոտի դեղ էր շարում, պատմում է Արամ պապը, կալի մոտ: Անդրանիկը կողքից նայում ա, ասում ա՝ այ տղա, տենց չէ, նենց դիր: Մեր կեղացին ասըմ ա, ես վարպետ եմ, չե՞մ իմանըմ՝ ոնց շարեմ: Սկսում

է վիճել, չի ենթարկվում: Անդրանիկն էլ ձեռիցը բռնում, դեզից թալըմ ա մեր կեղացուն, ինքը թռնում ա դեզի վրա, սկսում ա շարել խոտը, ասում ա՝ այ սենց պիտի շարել»:

Անգեղակոթում զորավարը մտերիմ էր գյուղի տերտեր Գրիգորի հետ, միասին նստում էին, պլաններ քննարկում: «Գյուղի տերտեր մի համով բան բերում-տալիս էր Անդրանիկին», - սրամով էր արտահայտվում նաեւ տեր հոր համակրանքը զորավարի հանդեպ:

Անգեղակոթում զորավարը կոչ էր անում համախմբվել, ջոկատներ կազմել, պայքարել թուրք բռնակալների դեմ, զինվորներին էլ հորդորում էր լինել քաջ, հայրենասեր, ազնիվ, սիրելի հայրենիքը: Արամ պապը հիշում է, թե զորավարն ինչպես հրաժեշտ տվեց անգեղակոթցիներին. «Անդրանիկը ոտքը դրավ քարին՝ ծին նստելու համար, ասաց, խեղճ հայեր, ես կնացիմ, վերջը ռուսի փեշը կբռնեք: Անդրանիկն Անգեղակոթը լավ ա պահա», - այսպես է զորավարի մասին միտքն ամփոփում մեր տարեց գրուցակիցը:

Պատմական այլ նշանավոր փաստեր էլ կան՝ կապված Անդրանիկի՝ Անգեղակոթում գտնվելու հետ: 1918-ի սեպտեմբերի 5-ին Անգեղակոթում ժողով է գումարվում, որին մասնակցում են Սիսիանի բոլոր հայկական գյուղերի ներկայացուցիչները: Դիմելով նրանց՝ Անդրանիկը քննարկման է դնում թուրքերին դիմադրելու պատրաստակամության հարցը: Ավելի ներկայացուցչական էր սեպտեմբերի 12-ին գյուղի եկեղեցում տեղի ունեցած խորհրդակցությունը՝ հայ եւ ռուս գյուղերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Անդրանիկը զեկուցում է թուրքական հարձակումների հետեւանքով հայ ժողովրդի ծանր կացության մասին: Մանրամասն քննարկելով բոլոր դժվարությունները՝ ժողովը միահամուռ որոշում է, որ Անդրանիկը պիտի մնա Սիսիանում եւ գլխավորի կռիվները թուրքերի դեմ, որքան էլ որ մարտերն անհավասար լինեն՝ հակառակորդի ուժերի գերակշռության պատճառով: Ժողովականներն էլ Անդրանիկին խնդրում են մնալ խոստանալով Սիսիանի գյուղերի ուժերով զորքն ապահովել ամեն ինչով: Ժողովն անհրաժեշտ է գտել Սիսիանի 22 հայկական գյուղերից հավաքել չորս հազար փութ ցորեն, երկու հազար փութ գարի, հայտարարել 20-25 տարեկան երիտասարդների զինակոչ, ռազմամթերքը տեղափոխելու համար տրամադրել փոխարանիցներ (տվյալները վերցված են Գեւորգ Դարիբջանյանի «Ժողովրդական հերոս Անդրանիկ» գրքից): Եվ իրոք, նրա սարսափից թուրքերը չէին հարձակվում ոչ միայն Անգեղակոթի, այլեւ մերձակա գյուղերի վրա:

Անդրանիկը շրջապայում էր գյուղերում, ոգետրում բնակիչներին, ստուգում նորակոչիկների զինավարժությունները, պատժում խուճապի մատնվածներին, ոգետրում Սիսիանի պաշտպաններին: Վերջիններիս հետ Սյունյաց աշխարհը պաշտպանում էին զորավարի հետ եկած զորականները: Անգեղակոթի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում նրա զինվորների երկու շիրմաքար կա: Մեկի վրա մակագրություն. «Այս է տապանը Թռնակի Սշո Բերդ գյուղի նահատակ»:

Երախտապարտ անգեղակոթցիները գյուղում ամանհացրել են զորահրամանատարի հիշատակը: 1991-ին գյուղի կենտրոնում հանրեց Անդրանիկ Օզանյանի հուշարձանը, որ կերտել էր համագյուղացի քարագործ-վարպետ Գուրգեն Ավետիսյանը: Մի քանի տարի անց հուշակոթողի հարեւանությամբ ամփոփվեցին Արցախյան գոյամարտում ընկածների աճյունները...

ՀԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

